

**ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄ ԵՎ ՀԵՏԱ-
ԽՈՒՋՈՒԹՅՈՒՆ**, հանրավայրերի հայտնա-
բերման և արդյունաբերական գնահատ-
ման աշխատանքների համալիր: Երկրա-
բանական որոնումները լինում են հե-
ռա և կարային և մաքրամասն:
Առաջինները տարվում են թույլ ուսումնա-
սիրված տարածքներում, երկրորդները՝
հայտնաբերված հանքաքարակումների
շրջանում: Դրանք զուգակցվում են *երկ-
րաբանական հանույթի* հետ և որոնումնե-
րի հիմնական մեթոդն են: Այդ աշխա-
տանքների ընթացքում կատարվում է՝
սոկահանքի հավաքում, հողմնահարման,
գետային և մորենային բեկորային նյու-
թի մեջ հանքանյութի ու դրանց ուղեկցող
միներալների (ապարների) կտորների
մանրակրկիտ որոնում, ապարների մեր-
կացումների ու հանքափորվածքների
մանրամասն ուսումնասիրություն, հան-
քագործության հին հետքերի որոնում,
լեգենդների ու պատմությունների հավաքա-
գրում, գրույց է անցկացվում բնիկների՝
հատկապես հովիվների, որսորդների, ան-
տառապահների հետ: Լայնորեն կիրառ-
վում են երկրաքիմիական և երկրաֆիզի-
կական ուսումնասիրությունները (տես
Երկրաքիմիական մեթոդներ որոնման,
*Երկրաֆիզիկական մեթոդներ հետախույ-
ման*). մանրամասն որոնումների ժամա-
նակ հաճախ փորվում են հորատանցքեր
և ոչ մեծ խորության բովանցքեր: Դաշ-
տային աշխատանքները ավարտելով,
կազմվում են երկրաբանական, կառուց-
վածքային, շերտային, սոկահանքային,
երկրաքիմիական, մետաղածնության
քարտեզներ, տրվում հետազոտվող տա-
րածքում հայտնաբերված բոլոր հանքա-
վայրերի և հանքաքարակումների գնա-
հատականն ու դրանց հետազոտման հեր-
թական փուլին անցնելու հիմնավորումը:

Երկրաբանական որոնումներին հաջոր-
դում է հետախույզությունը, որի խնդիրն
է հանքակուտակի բացումը, նմուշար-
կումը և պարամետրերի որոշումը: Պինդ
հանածոների համալիրները սովորաբար

է հանքակուտակի բացումը, նմուշար-
կումը և պարամետրերի որոշումը: Պինդ
հանածոների հանքավայրերը սովորաբար
հետախույզվում են հանքափորվածքների
և հորատանցքերի օգնությամբ, իսկ հե-
ղուկներինը և գազերինը՝ միայն հորա-
տանցքերով: Երկրաբանական հետախու-
զությունները լինում են նախնական,
մաքրամասն և շահագործո-
ղական: Նախնական հետախույզու-
թյան ընթացքում պարզվում է հանքա-
վայրի կամ դրա մի մասի արդ. լինելու
հարցը: Որոշվում են հանքավայրի ընդ-
հանուր չափերը, հիմնական հանքամար-
մինների ձևերը, հանքանյութերի բաղա-
դրությունը, բնական տեսակները, տեխ-
նոլոգիական հատկանիշները և շահա-
գործման պայմանները: Հաշվվում են
հանքավայրի պաշարները, կազմվում արդ.
նշանակության գնահատման և մանրա-
մասն հետախույզության անցնելը հիմնա-
վորող տեխնիկա-տնտ. զեկույց (ՏՏԶ):
Մանրամասն հետախույզության ժամա-
նակ առավել ճշգրիտ են որոշում հանքա-
կուտակների սահմանագծերը, ներքին
կառուցվածքը, տեղադրման պայմաններն
ու նյութական կազմը, ինչպես նաև հան-
քավայրի շահագործման լեռնա-տեխ.
պայմանները: Դրա արդյունքների հիման
վրա կազմվում է հանքավայրի իրացման
տեխ. նախագիծը և սկսվում հանքարդ.
ձեռնարկության շինարարությունը: Շա-
հագործողական հետախույզությունը
սկսվում է օգտակար հանածոյի հանույ-
թից մի փոքր վաղ և հետագայում ընթա-
նում շահագործմանը զուգընթաց: Հետա-
խույզման այս փուլի հիմնական խնդիրը
շահագործման աշխատանքները պլանա-
վորելու և կարգավորելու համար ան-
հրաժեշտ երկրաբանական տվյալներ
(հանքաքարի արդ. տեսակների տեղա-
բաշխում, լեռնային ու ջրաերկրաբանական
պայմանների բացահայտում են) ստանա-
լըն է: Հետախույզման ժամանակ հան-
քափորվածքները, հորատանցքերը և երկ-
րաֆիզիկական ուսումնասիրող. էլեկտր.

հանքամարմինների ձևերից ու չափերից,
հանքավայրի տարածքում տեղաբաշխվում
են կամ ցանցի ձևով (հանգույցներում
տեղադրվում են հանքափորվածքները),
կամ հետախույզական գծերով: Ոչ մեծ
հաստության հանքաքարակները և հանքա-
շերտերը սովորաբար հետախույզվում են
հետապնդող հանքափորվածքներով: Բո-
լոր հանքափորվածքները և հորատանց-
քերը մանրամասն փաստագրվում են և
նմուշարկվում: ՍՍՀՄ-ում օգտակար հա-
նածոների պաշարներն ըստ արժանահա-
վատության միավորվում են 4 կարգում՝
A, B, C₁, C₂ (արժանահավատության
աստիճանի նվազման կարգով): ՀՍՍՀ
տարածքում Ե. ո. և հ. կատարում են
ՀՍՍՀ Մինիստրների սովետի երկրա-
բանական և գունավոր մետալուրգիայի
վարչությունների արշավախմբերը: Սովե-
տական կարգերի հաստատումից հետո
հանրապետությունում հետախույզվել են
հանքային ջրերի, շինանյութերի, ածխի,
սև, գունավոր և հազվագյուտ մետաղների
ինչպես հայտնի, այնպես էլ նոր հայտնա-
բերված բազմաթիվ հանքավայրեր, գըտ-
նելվել քաղցրահամ ջրերի ստորգետնյա
բնական խոշոր շտեմարաններ: